

### 1.3. Գներ և սակագներ

**2003թ. հունվար-օգոստոսին գների փոփոխություններն ըստ հանրապետության  
տնտեսության առանձին հատվածների**

|  | Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup> | Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup> | Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup> | Բերնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup> | Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս <sup>5)</sup> | Գյուղատնտեսական սուրբառ արտադրության միջոցների գննան գների ինդեքս <sup>6)</sup> |
|--|---------------------------------------|---|---|---|---|---|
| Հունվար  | 104.1                                 | 97.0  | 100.0   | 99.6  | 100.2   | 100.8   |
| Փետրվար  | 98.5                                  | 105.7   | 100.3   | 100.2   | 102.5   | 99.5  |
| Մարտ   | 99.5                                  | 100.0   | 100.0   | 100.6   | 100.0   | 100.6   |
| Ապրիլ  | 102.0                                 | 102.5   | 100.0   | 100.0   | 98.3  | 98.6  |
| Մայիս  | 101.2                                 | 108.1   | 99.9  | 99.6  | 97.4  | 98.0  |
| Յունիս   | 101.4                                 | 95.0  | 99.9  | 99.8  | 81.0  | 102.7   |
| Յուլիս   | 94.5                                  | 103.6   | 100.0   | 100.1   | 71.1  | 101.5   |
| Օգոստոս  | 97.7                                  | 97.7  | 100.0   | 98.3  | 79.4  | 100.6   |
| Օգոստոսը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ                      | 98.6                                  | 111.7*)   | 100.1   | 98.2  | 96.5*)  | 103.0*)   |
| 2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ | 103.4                                 | 105.7   | 100.8   | 102.2   | 103.2   | 105.7   |

\*) 2003թ. օգոստոսի և 2002թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիմագրումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիմագրումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 քաղային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

<sup>4)</sup> Կաշվարկում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բերնառարումների դիմագրում սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գննան գների և ծավալների հետազոտման տվյալների:


#### Գների, սակագների աճի տեմպերը 2002-2003թթ. հունվար-օգոստոսին



**Արտարժութային շուկա:** 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական շուկայում գրանցված 2.3% գնանակումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3% նվազումով: Օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գները և հաշվարկային փոխարժեքը նվազել են, համապատասխանաբար՝ 1.4% և 1.2%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների ու հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 3.6% և 1.1% նվազում: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2003թ. օգոստոսին կազմել է 577.84 դրամ, ինչը 3.5% գերազանցել է 2002թ. օգոստոսի համապատասխան ցուցանիշը (558.5 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2002-2003թթ. հունվար-օգոստոսին**

(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Սպառողական գներ:** 2003թ. օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում շարունակվել է հուլիսին գրանցված գնանկնան միտումը՝ 2 ամսվա ընդհանուր գնանկումը կազմել է 7.7% (հուլիսին՝ 5.5%, օգոստոսին՝ 2.3%), մեծապես պայմանավորված գյուղատնտեսական մթերքի սեղոնայնությամբ:

2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնանկումը կազմել է 3.5%, ծառայությունների սակագների հավելածը՝ 0.1%, իսկ ոչ պարենային ապրանքների գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:


Սպառողական գների ինդեքսը 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 98.6%, ինչը 2.2 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (96.4%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 97.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.0%, ծառայությունների սակագներինը՝ 102.0%:

2003թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2%՝ 0.2 տոկոսային կետով փոքր 2002թ. նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (- 0.4%):

## 1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

### Սպառողական գների հավելաճը 1995-2003թթ. օգոստոսին


(նախորդ տարվա դեկտեմբերի մկանմամբ, %)



2003թ. օգոստոսին 2002թ. օգոստոսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.3%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 105.2%, ոչ պարենային ապրանքներին՝ 101.6%, ծառայությունների սակագներին՝ 102.2%, իսկ հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար, 103.4%, 104.0, 102.4 և 101.9%:

**ՀՅ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվար-օգոստոսին**

(նախորդ ամսվա համեմատ, %)




**Պարենային ապրանքների գներ:** 2003թ. ապրիլ-հունիսին պարենային ապրանքների շուկայում արձանագրված 7.6% ընդհանուր գնածից հետո, հուլիս-օգոստոսին գրանցվեց 12.5% ընդհանուր գնանկում, այդ թվում. հուլիսին՝ 9.0%, օգոստոսին՝ 3.9%, իմնականում պայմանավորված բանջարեղենի և մրգի գների սեղոնային, ինչպես նաև ձկնամթերքի ապրանքախմբում արձանագրված գների նվազմամբ:

2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է 30.7% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 26.2% գնանկման դիմաց:

## 1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

Բանջարեղենի և կարտոֆիլի գների ամսական փոփոխությունների դիմամիկան 2001-2003թթ.  
հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)




Օգոստոսին հուլիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 18.3%, հիմնականում պայմանավորված սմբռկի (80.7%), կանաչ պղպեղի (73.4%), լոլիկի (72.1%), գազարի (26.1%), վարունգի (22.9%) գնանկումով։ Կանաչ լոբու, կարտոֆիլի, գլուխ սոխի գները նվազել են համապատասխանաբար՝ 16.1%, 13.2% և 13.1%, իսկ բարմ կաղամբի գինն աճել է 23.8%։ Դիտարկվող բոլոր բնակավայրերում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 26.9-15.4% գնանկում։

Մրգի ապրանքախմբում 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 13.0% գնանկում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14.4% գնաճի դիմաց։ Օգոստոսին հուլիսի համեմատ մրգի գնանկումը կազմել է 24.3%, հիմնականում պայմանավորված սեխի (77.5%), ձմեռուկի (63.7%), տաճճի (49.7%), դեղճի (41.4%) գնանկումով։ Նշված ժամանակահատվածում հանրապետությունում խաղողի և ծիրանի գներն աճել են, համապատասխանաբար՝ 10.5% և 6.2%։ Ներկրված ցիտրուսային մրգատեսակներից կիտրոնի և նարնջի գները նվազել են, համապատասխանաբար՝ 6.1% և 1.8%։ Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում օգոստոսին գրանցվել է մրգի 34.0-5.4% գնանկում (ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է ք. Կապանում)։

**Մրգի գների փոփոխությունները 2001-2003թթ. հունվար-օգոստոսին**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Սսամբերքի ապրանքախմբում 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 7.5%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.8% գնած: Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում գրանցվել է 0.9-3.4% գնած, 4 քաղաքներում՝ 3.8-0.1% գնանկում, իսկ Յրազդանում (Չարենցավանում) գները մնացել են անփոփոխ:

Ոչ ոգելից խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի, հացամթերքի ապրանքախմբերում 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է 0.1-0.2% գնած, շաքարավագի, կարնամթերքի, հրուշակեղենի գները նվազել են 1.2-0.1%, իսկ կենդանական և բուսական յուղի գները նախորդ ամսվա գների համեմատ մնացել են անփոփոխ:

2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում արձանագրվել է 38.1%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 36.7% գնանկում, ինչը թարմ և ապիստած «սիգ» տեսակի ձկան համապատասխանաբար 38.8% և 44.3% գնանկման արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում օգոստոսին գրանցվել է ձկնամթերքի 57.0-16.5% գնանկում, ընդ որում գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Յրազդանում, Չարենցավանում:

2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է ձվի 23.8% գնանկում, իսկ հուլիսի համեմատ՝ 0.4% գնած:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.2% գնած:

#### Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

|   | 2003 թվականի<br>օգոստոսը   |                         |                                | հունվար-օգոստոսը 2002թ.<br>հունվար-օգոստոսի նկատմամբ (%) |  |
|---|----------------------------|-------------------------|--------------------------------|--|--|
|   | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ | 2002թ.<br>օգոստոսի<br>նկատմամբ |  |  |
|   |                            |                         |                                |  |  |
| <b>Պարենային ապրանքներ</b><br>(Աերայալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 97.6                       | 96.5                    | 105.2                          | 104.0  |  |
| <b>Պարենային ապրանքներ</b>                                    | 97.3                       | 96.1                    | 105.8                          | 104.7  |  |
| հացամթերք   | 107.3                      | 100.2                   | 107.7                          | 102.1  |  |
| մսամթերք  | 107.5                      | 100.8                   | 108.0                          | 103.6  |  |
| ձկնամթերք   | 61.9                       | 63.3                    | 98.5                           | 105.2  |  |
| կարնամթերք  | 93.5                       | 99.3                    | 96.3                           | 97.3   |  |
| ձու   | 76.2                       | 100.4                   | 119.9                          | 99.7   |  |
| կենդանական և բուսական յուղ                                    | 101.4                      | 100.0                   | 104.2                          | 102.0  |  |
| միրզ  | 87.0                       | 75.7                    | 97.9                           | 127.7  |  |
| բանջարեղեն և կարտոֆիլ   | 69.3                       | 81.7                    | 102.8                          | 112.8  |  |
| շաքարավագ   | 101.3                      | 98.8                    | 105.5                          | 102.4  |  |
| սուրճ, թեյ, կակաո   | 100.9                      | 100.1                   | 100.9                          | 99.8   |  |
| հրուշակեղեն   | 100.2                      | 99.9                    | 101.3                          | 101.9  |  |
| այլ մթերք   | 98.4                       | 99.1                    | 98.5                           | 99.4   |  |
| ոչ ոգելից խմիչք   | 102.1                      | 100.1                   | 102.6                          | 102.3  |  |
| <b>Ոգելից խմիչք և ծխախոտ</b>                                  | 100.2                      | 100.0                   | 100.7                          | 98.8   |  |

**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ գները նվազել են 1.0%-ով: Արձանագրված գնանկմանը մեծապես նպաստել է հանրապետությունում վառելիքի և դեղամիջոցների, համապատասխանաբար՝ 8.2% և 6.1% գնանկումը: Բենզինի և դիզելային վառելիքի գները նույն ժամանակահատվածում աճել են, համապատասխանաբար՝ 3.8 և 4.0%: 2003թ օգոստոսին հուլիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է 2.2% և 3.2%:

Մշակույթի, հագուստի և կտորեղենի, կահույքի, ոսկերչական ապրանքների, դեղամիջոցների, կենցաղային էլեկտրաապրանքների, գորգեղենի, անձնապիտո ապրանքների, խոհանոցային սպասքի, տեքստիլեղենի ապրանքախմբերում 2003թ.

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է 0.6-0.1% գնանկում: Շինանյութերի, գեղահարդարման ապրանքների գները մնացել են անփոփոխ, իսկ այգեգործական ապրանքների, գրենական պիտույքների, լվացող միջոցների գներն աճել են համապատասխանաբար՝ 3.5%, 0.5 և 0.2%:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները (%)**

|  | 2003 թվականի<br>օգոստոսը         |                               |                                | հունվար-օգոստոսը 2002թ.<br>հունվար-օգոստոսի նկատմամբ |
|--|----------------------------------|-------------------------------|--------------------------------|--|
|  | 2002թ.<br>դեկտեմբերի<br>նկատմամբ | 2003թ.<br>հուլիսի<br>նկատմամբ | 2002թ.<br>օգոստոսի<br>նկատմամբ |  |
|  |                                  |                               |                                |  |
| <b>Ոչ պարենային ապրանքներ<br/>այդ թվում՝</b> | 99.0                             | 100.0                         | 101.6                          | 102.4  |
| հագուստ և կտորեղեն                           | 98.5                             | 99.4                          | 101.9                          | 102.5  |
| վառելիք                                      | 91.8                             | 99.9                          | 123.2                          | 125.9  |
| կահույք                                      | 99.0                             | 99.4                          | 101.5                          | 101.2  |
| գորգեղեն                                     | 102.9                            | 99.8                          | 103.6                          | 103.8  |
| տեքստիլեղեն                                  | 99.2                             | 99.9                          | 99.2                           | 99.0   |
| կենցաղային էլեկտրաապրանքներ                  | 95.8                             | 99.8                          | 96.9                           | 97.3   |
| խոհանոցային սպասք                            | 101.2                            | 99.9                          | 102.3                          | 102.1  |
| լվացամիջոցներ                                | 101.4                            | 100.2                         | 101.0                          | 100.3  |
| շինանյութեր                                  | 99.0                             | 100.0                         | 99.1                           | 99.1   |
| այգեգործական ապրանքներ                       | 106.8                            | 103.5                         | 105.0                          | 98.2   |
| դեղամիջոցներ                                 | 93.9                             | 99.7                          | 92.5                           | 94.6   |
| անձնական օգտագործման մեքենաներ և<br>բենզին   | 103.7                            | 102.2                         | 104.6                          | 108.8  |
| մշակույթի ապրանքներ                          | 97.4                             | 99.4                          | 99.3                           | 99.7   |
| գրենական պիտույքներ                          | 100.4                            | 100.5                         | 99.4                           | 99.3   |
| գեղահարդարման ապրանքներ                      | 100.5                            | 100.0                         | 100.6                          | 100.9  |
| ոսկերչական ապրանքներ                         | 112.0                            | 99.5                          | 119.0                          | 118.6  |
| անձնապիտ ապրանքներ                           | 100.6                            | 99.9                          | 101.0                          | 101.0  |

**Ծառայությունների սակագներ:** 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների 0.1% հավելածը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտի ծառայությունների սակագների 0.9% հավելածով՝ կապված օդային տրանսպորտի սակագների 1.9% հավելածի հետ: Նշված ժամանակահատվածում կապի, հանգստի կազմակերպման, մշակույթի, իրավական ու բանկային, կենցաղային ծառայությունների ոլորտի, կրթության համակարգի, հանրային սննդի սակագները նվազել են 0.8-0.1%, իսկ բնակարանային-կոմունալ, բուժսպասարկման ծառայությունների ոլորտում սակագների մակարդակը մնացել է անփոփոխ:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների  
սակագների փոփոխությունները**

|   | 2003 թվականի<br>օգոստոսը         |                               |                                | հունվար-օգոստոսը 2002թ.<br>հունվար-օգոստոսի նկատմամբ |
|---|----------------------------------|-------------------------------|--------------------------------|--|
|   | 2002թ.<br>դեկտեմբերի<br>նկատմամբ | 2003թ.<br>հուլիսի<br>նկատմամբ | 2002թ.<br>օգոստոսի<br>նկատմամբ |  |
|   |                                  |                               |                                |  |
| <b>Ծառայություններ, ընդամենը<br/>այդ թվում՝</b> | 102.0                            | 100.1                         | 102.2                          | 101.9  |
| կենցաղային                                      | 99.6                             | 99.8                          | 99.7                           | 99.8   |
| բնակարանային-կոմունալ                           | 100.0                            | 100.0                         | 100.0                          | 100.0  |
| բուժսպասարկման                                  | 101.0                            | 100.0                         | 100.8                          | 99.8   |
| տրանսպորտի                                      | 107.5                            | 100.9                         | 106.5                          | 103.7  |
| կապի  | 103.4                            | 99.2                          | 106.3                          | 109.5  |
| մշակույթի                                       | 100.0                            | 99.8                          | 100.0                          | 106.5  |
| կրթության համակարգի                             | 100.0                            | 99.8                          | 103.6                          | 102.8  |
| հանգստի կազմակերպման                            | 100.1                            | 99.7                          | 98.9                           | 100.8  |
| հանրային սննդի                                  | 103.5                            | 99.9                          | 103.1                          | 102.5  |
| իրավական և բանկային                             | 99.8                             | 99.8                          | 99.8                           | 100.0  |

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 4.5-1.5% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Եղեգնաձոր և Մարտունի քաղաքներում): Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 2.0%:

**ՀՅ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2002-2003թթ. օգոստոսի 30-ի դրությամբ**

(Դրամ՝ կգ-ի համար)

|                           | Միս<br>տա-<br>վարի | Պանիր | Կա-<br>րոագ | Բուսա-<br>կան<br>յուղ,<br>լիտր | Զու,<br>տաս-<br>նյակի<br>համար | Շաքա-<br>րա-<br>վազ | Կար-<br>տոֆիլ | Գլուխ-<br>սոխ | Կա-<br>ղամբ | Խնձոր |
|---------------------------|--------------------|-------|-------------|--------------------------------|--------------------------------|---------------------|---------------|---------------|-------------|-------|
| <b>2002թ.</b>             |                    |       |             |                                |                                |                     |               |               |             |       |
| <b>ՀՅ, ընդամենը</b>       | 1105               | 1242  | 1339        | 564                            | 340                            | 246                 | 120           | 128           | 71          | 241   |
| Երևան                     | 1088               | 1308  | 1392        | 568                            | 330                            | 246                 | 128           | 117           | 75          | 250   |
| Գյումրի                   | 1067               | 1188  | 1275        | 557                            | 338                            | 260                 | 103           | 177           | 50          | 275   |
| Վանաձոր                   | 1100               | 1000  | 1155        | 555                            | 335                            | 232                 | 125           | 115           | 78          | 250   |
| Վաղարշապատ                | 1200               | 1200  | 1150        | 530                            | 320                            | 240                 | 80            | 100           | 50          | 200   |
| Թալին                     | 1200               | 1200  | 1300        | 540                            | 400                            | 245                 | 120           | 120           | 70          | 130   |
| Ողջաշամ                   | 1150               | 1200  | 1300        | 576                            | 350                            | 250                 | 100           | 150           | 70          | 250   |
| Նրագդամ, Չարենցավան       | 1200               | 1200  | 1250        | 550                            | 350                            | 240                 | 120           | 130           | 65          | 170   |
| Եղեգնաձոր                 | 1100               | 1200  | 1250        | 550                            | 380                            | 240                 | 110           | 200           | 100         | 200   |
| Մարտունի                  | 1000               | 1100  | 1400        | 600                            | 400                            | 250                 | 110           | 150           | 50          | 300   |
| Կապան                     | 1180               | 1200  | 1500        | 564                            | 380                            | 258                 | 132           | 220           | 104         | 234   |
| <b>2003թ.<sup>1</sup></b> |                    |       |             |                                |                                |                     |               |               |             |       |
| <b>ՀՅ, ընդամենը</b>       | 1227               | 1175  | 1473        | 657                            | 410                            | 264                 | 124           | 183           | 111         | 212   |
| Երևան                     | 1233               | 1183  | 1493        | 659                            | 398                            | 268                 | 133           | 185           | 129         | 207   |
| Գյումրի                   | 1125               | 1213  | 1388        | 643                            | 388                            | 275                 | 90            | 175           | 98          | 333   |
| Վանաձոր                   | 1200               | 1000  | 1433        | 640                            | 405                            | 245                 | 100           | 176           | 86          | 235   |
| Վաղարշապատ                | 1300               | 1250  | 1500        | 580                            | 450                            | 250                 | 120           | 150           | 80          | 200   |
| Թալին                     | 1300               | 1100  | 1300        | 700                            | 400                            | 270                 | 100           | 170           | 80          | 150   |
| Ողջաշամ                   | 1300               | 1200  | 1400        | 700                            | 450                            | 261                 | 120           | 180           | 80          | 200   |
| Նրագդամ, Չարենցավան       | 1300               | 1250  | 1500        | 654                            | 425                            | 255                 | 120           | 180           | 90          | 180   |
| Եղեգնաձոր                 | 1100               | 1150  | 1350        | 660                            | 450                            | 260                 | 120           | 150           | 100         | 200   |
| Մարտունի                  | 1100               | 1100  | 1500        | 700                            | 480                            | 260                 | 115           | 200           | 70          | 220   |
| Կապան                     | 1180               | 1160  | 1460        | 696                            | 420                            | 272                 | 138           | 230           | 72          | 170   |

Նանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1-0.3% (համեմատաբար բարձր ցուցանիշը գրանցվել է ք. Նրագդամում (Չարենցավանում), Վաղարշապատ և Եղեգնաձոր քաղաքներում գրանցվել է 0.8% և 0.4% գնանկում, իսկ Երևան և Մարտունի քաղաքներուն պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը):

**Որոշ ոչ պարենային ապրանքախնճերի գների փոփոխությունները 2003թ. օգոստոսին ըստ դիտարկվող քաղաքների**

(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)

|                     | Նագուստ<br>և կտորե-<br>ղեն | Կոշկեղեն | Վառելիք | Տեքս-<br>տիլեղեն | Ղեղա-<br>միջոցներ | Մշակույթի<br>ապ-<br>րանքներ | Գրենական<br>պիտույք-<br>ներ | Գեղահար-<br>դարման<br>ապրանք-<br>ներ |
|---------------------|----------------------------|----------|---------|------------------|-------------------|-----------------------------|-----------------------------|--------------------------------------|
| <b>ՀՅ, ընդամենը</b> | 98.5                       | 98.8     | 91.8    | 99.2             | 93.9              | 97.4                        | 100.4                       | 100.5                                |
| Երևան               | 98.6                       | 98.3     | 90.1    | 98.8             | 93.1              | 96.7                        | 99.5                        | 101.0                                |
| Գյումրի             | 97.8                       | 99.7     | 83.4    | 100.3            | 99.0              | 96.7                        | 100.1                       | 99.2                                 |
| Վանաձոր             | 95.6                       | 97.2     | 97.2    | 100.4            | 94.1              | 99.1                        | 103.0                       | 101.2                                |
| Վաղարշապատ          | 99.0                       | 99.2     | 92.5    | 101.0            | 91.0              | 102.8                       | 100.6                       | 98.3                                 |
| Թալին               | 97.5                       | 99.2     | 92.2    | 97.4             | 101.2             | 99.5                        | 103.0                       | 99.8                                 |

<sup>1</sup> 2003թ. գների դիտարկումը կատարվել է օգոստոսի 29-ին:

## 1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

|                        | Հագուստ<br>և կտորե-<br>նեն | Կոշկեղեն | Վառելիք | Տեքս-<br>տիլեղեն | Ղեղա-<br>միջոցներ | Մշակույթի<br>ապ-<br>րանքներ | Գրենական<br>պիտույք-<br>ներ | Գեղահար-<br>դարման<br>ապրանք-<br>ներ |
|------------------------|----------------------------|----------|---------|------------------|-------------------|-----------------------------|-----------------------------|--------------------------------------|
| Դիլիջան                | 100.3                      | 99.4     | 94.4    | 97.4             | 100.3             | 99.5                        | 100.6                       | 97.6                                 |
| Յրազդան,<br>Չարենցավան | 97.8                       | 98.7     | 98.7    | 100.4            | 93.7              | 97.8                        | 99.8                        | 100.2                                |
| Եղեգնաձոր              | 97.5                       | 99.8     | 86.0    | 101.8            | 88.8              | 96.5                        | 102.1                       | 104.7                                |
| Մարտունի               | 100.4                      | 103.1    | 97.9    | 97.4             | 95.6              | 98.4                        | 105.5                       | 100.3                                |
| Կապան                  | 100.7                      | 101.9    | 104.4   | 101.8            | 90.0              | 92.2                        | 101.3                       | 99.7                                 |

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության դիտարկված 6 քաղաքներում գրանցվել է սակագների 0.4-0.1% նվազում, երեքում՝ 1.2-2.2% հավելած, իսկ ք. Վաղարշապատում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ,  
ըստ դիտարկվող քաղաքների**

(%)

| Ապառո-<br>ղական<br>գների<br>ինդեքսը | Ապառո-<br>ղական<br>ապ-<br>րանքների | այդ թվում                       |                         |                          |                            | ծառայու-<br>թյունների |  |
|-------------------------------------|------------------------------------|---------------------------------|-------------------------|--------------------------|----------------------------|-----------------------|--|
|                                     |                                    | սպառողա-<br>կան ապ-<br>րանքների | դրամցից                 |                          |                            |                       |  |
|                                     |                                    |                                 | պարենային<br>ապրանքների | ոգելից խմիչք<br>և ծխախոտ | ոչ պարենային<br>ապրանքների |                       |  |
| <b>Դ, ընդամենը</b>                  | 98.6                               | 97.9                            | 97.3                    | 100.2                    | 99.0                       | 102.0                 |  |
| <i>այդ թվում</i>                    |                                    |                                 |                         |                          |                            |                       |  |
| Երևան                               | 98.1                               | 97.5                            | 96.9                    | 99.4                     | 98.8                       | 101.1                 |  |
| Գյումրի                             | 97.6                               | 96.0                            | 94.6                    | 99.8                     | 99.2                       | 104.9                 |  |
| Վանաձոր                             | 99.2                               | 98.3                            | 97.9                    | 101.1                    | 98.6                       | 103.0                 |  |
| Վաղարշապատ                          | 100.5                              | 100.1                           | 100.5                   | 99.0                     | 98.8                       | 102.4                 |  |
| Թալին                               | 98.9                               | 98.1                            | 97.5                    | 100.1                    | 99.4                       | 102.6                 |  |
| Դիլիջան                             | 100.1                              | 99.7                            | 99.4                    | 101.6                    | 100.0                      | 101.8                 |  |
| Յրազդան, Չարենցավան                 | 97.8                               | 96.6                            | 95.0                    | 103.8                    | 99.4                       | 103.2                 |  |
| Եղեգնաձոր                           | 101.0                              | 100.5                           | 100.8                   | 101.9                    | 98.6                       | 103.2                 |  |
| Մարտունի                            | 102.6                              | 102.2                           | 102.5                   | 102.8                    | 100.7                      | 104.6                 |  |
| Կապան                               | 98.6                               | 97.6                            | 96.4                    | 102.2                    | 100.0                      | 102.8                 |  |

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը:** 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը հանրապետությունում կազմել է 11.7% և 8.3 տոկոսային կետով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (3.4%): Օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 2.3% գնաճում, ինչը պայմանավորվել է գունավոր մետալուրգիայի, անտառային, փայտամշակման, թղթի-ցեղուղոգի, այլ արդյունաբերական արտադրության (ոսկերչական արդյունաբերության), թերև արդյունաբերության, մեքենաշինության թողարկած արտադրանքի 10.1-2.4% գնաճումով:

**Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի**


(%)

|                                   | 2003 թ պակամի<br>օգոստոսը                  |                                    |  | 2002թ. հուն-<br>վար-օգոս-<br>տոսը 2001թ.<br>հունվար-<br>օգոստոսի<br>նկատմամբ |
|-----------------------------------|--|------------------------------------|--|--|
|                                   | 2002թ.<br>դեկտեմ-<br>բերի<br>նկատ-<br>մամբ | 2003թ.<br>հուլիսի<br>նկատ-<br>մամբ | հունվար-<br>օգոստոսը<br>2002թ. հուն-<br>վար-օգոստոսի<br>նկատմամբ |  |
|                                   |  |                                    | 2002թ.<br>դեկտեմ-<br>բերի<br>նկատ-<br>մամբ                       |  |
| <b>Ամբողջ արդյունաբերությունը</b> | 111.7                                      | 97.7                               | 105.7  | 103.4  |
| <i>այդ թվում</i>                  |  |                                    |  |  |
| <b>Էլեկտրաէներգետիկա</b>          | 94.6                                       | 100.2                              | 100.5  | 101.7  |

## 1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

|   | 2003 թ ականի<br>օգոստոսը                   |                                    | հունվար-<br>օգոստոսը<br>2002թ. հուն-<br>վար-օգոստոսի<br>նկատմամբ | 2002թ. հուն-<br>վար-օգոս-<br>տոսը 2001թ.<br>հունվար-<br>օգոստոսի<br>նկատմամբ |
|---|--|------------------------------------|--|--|
|   | 2002թ.<br>դեկտեմ-<br>բերի<br>նկատ-<br>մամբ | 2003թ.<br>հուլիսի<br>նկատ-<br>մամբ |  |  |
|   |  |                                    |  |  |
| գումավոր մետալուրգիա  | 140.4                                      | 89.9                               | 134.5  | 122.5  |
| քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն                            | 118.8                                      | 101.2                              | 114.6  | 101.8  |
| մեքենաշինություն  | 92.6                                       | 97.6                               | 96.7   | 97.9   |
| այլ արդյունաբերական արտադրություն<br>(ուսկերչական արդյունաբերություն) | 113.3                                      | 97.1                               | 83.9   | 96.0   |
| անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն           | 100.6                                      | 95.8                               | 103.6  | 97.3   |
| շինանյութերի արդյունաբերություն                                       | 105.4                                      | 102.9                              | 103.1  | 97.7   |
| թերև արդյունաբերություն   | 92.6                                       | 95.4                               | 96.7   | 102.9  |
| սննդի (ներառյալ այսուհի ու համակցված կերերի) արդյունաբերություն       | 111.8                                      | 99.9                               | 103.9  | 100.2  |
| հրատարակչական գործերի արտադրություն                                   | 91.5                                       | 101.2                              | 96.5   | 106.0  |

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսներն ըստ արդյունաբերության ճյուղերի  
(2003թ. օգոստոսը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ, %)**




- 1-Էլեկտրաէներգիա
- 2-Գումավոր մետալուրգիա
- 3-Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն
- 4-Մեքենաշինություն
- 5-Այլ արդյունաբերական արտադրություն
- 6-Անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն
- 7-Շինանյութերի արդյունաբերություն
- 8-Թերև արդյունաբերություն
- 9-Սննդի արդյունաբերություն
- 10-Հրատարակչական գործերի արտադրություն
- 11-ՀՀ, ընդամենը

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2003թ. օգոստոսին 2002թ. դեկտեմբերի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագները հանրապետությունում նվազել են 1.8%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1.7%: Վերջինս մեծապես պայմանավորվել է երկարուղային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 1.8% նվազումով: Օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 0.3%, իսկ ավտոմոբիլային տրանսպորտում գրանցվել է սակագների 0.9% հավելած:


**Տրամսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսները  
2002-2003թթ. հունվար-օգոստոսին**

(Նախորդ տարվա հունվար-օգոստոսի մկատմամբ, %)



**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները:** 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ, սեզոնայնությամբ պայմանավորված, հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գները նվազել են 20.6%, ընդ որուն գնանկան համեմատաբար բարձր ցուցանիշներ գրանցվել են Արմավիրի (34.7%) և Արարատի (29.7%) մարզերում:

**Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում  
2003թ. օգոստոսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի  
(Նախորդ ամիսը =100,0)**



**Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1998-2003թթ. օգոստոսին  
(դրամ)**

|                | Չափի միավորը | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|----------------|--------------|------|------|------|------|------|------|
| Ցորեն          | կգ           | 98   | 90   | 82   | 89   | 77   | 103  |
| Գարի           | - , -        | 94   | 71   | 69   | 67   | 62   | 71   |
| Լորի           |              | 298  | 290  | 307  | 300  | 450  | ...  |
| Կարսոֆիլ       | - , -        | 92   | 91   | 61   | 100  | 74   | 75   |
| Կաղամբ         | - , -        | 87   | 30   | 117  | 75   | 51   | 84   |
| Գազար          | - , -        | 86   | 51   | 58   | 62   | 100  | 106  |
| Գլուխ սոխ      | - , -        | 90   | 76   | 85   | 73   | 77   | 94   |
| Խնձոր          | - , -        | 93   | 97   | 35   | 105  | 174  | 142  |
| Տանձ           |              | 112  | 130  | 122  | 136  | 253  | 152  |
| Մեղր           | - , -        | 2637 | 2556 | 2326 | 2689 | 2467 | 2487 |
| Միս տավաղի     | - , -        | 913  | 852  | 758  | 842  | 899  | 967  |
| Ոչխարի         | - , -        | 934  | 824  | 772  | 841  | 928  | 958  |
| Խոզի           | - , -        | 1301 | 951  | 1028 | 1141 | 947  | 1082 |
| Կար            | լ            | 104  | 108  | 97   | 96   | 91   | 91   |
| Մածուն         | - , -        | 168  | 168  | 164  | 167  | 167  | 165  |
| Պանիր (յուղոտ) | կգ           | 868  | 849  | 731  | 765  | 725  | 760  |
| Չուլ           | հատ          | 48   | 41   | 35   | 37   | 39   | 41   |
| Միամյա խոտեր   | կգ           | 21   | 17   | 15   | 17   | 19   | 21   |
| Բազմամյա խոտեր | - , -        | 25   | 23   | 24   | 21   | 23   | 27   |

## 1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

... Նիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

2003թ. օգոստոսին 2002թ. օգոստոսի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 105.2%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 100.4%, անասնապահական մթերքինը՝ 110.0%, իսկ հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի համեմատ, համապատասխանաբար՝ 103.2, 97.0 և 107.6%:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի**

(%)

|                     | 2003 թ վականի              |                         | 2002թ. հունվար-օգոստոսը 2001թ. հունվար-օգոստոսի նկատմամբ |  |
|---------------------|----------------------------|-------------------------|--|--|
|                     | օգոստոսը                   |                         |  |  |
|                     | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ |  |  |
| <b>ՀՅ, ընդամենը</b> | 96.5                       | 79.4                    | 103.2  |  |
| <i>այդ թվում՝</i>   |                            |                         | 104.7  |  |
| Արագածոտն           | 103.7                      | 99.4                    | 109.6  |  |
| Արարատ              | 94.2                       | 70.3                    | 104.9  |  |
| Արմավիր             | 85.9                       | 65.3                    | 85.2   |  |
| Գեղարքունիք         | 99.6                       | 100.5                   | 106.0  |  |
| Լոռի                | 92.0                       | 106.9                   | 104.9  |  |
| Կոտայք              | 98.1                       | 101.8                   | 108.3  |  |
| Շիրակ               | 103.9                      | 97.2                    | 104.4  |  |
| Սյունիք             | 104.9                      | 105.8                   | 112.1  |  |
| Վայոց ձոր           | 108.1                      | 101.7                   | 104.2  |  |
| Տավուշ              | 119.9                      | 96.7                    | 105.9  |  |
|                     |                            |                         | 95.8   |  |

2003թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցված գյուղատնտեսության արտադրության միջոցների 0.6% գնման գնաճը հիմնականում պայմանավորվել է սերմացուների և տնկիների (14.1%), անասունների (11.7%), պարարտանյութերի (3.4%), էներգիայի և քսայուղերի (2.3%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (1.1%) հավելածով։ Շինանյութերի, անասնակերի, բույսերի պաշտպանության միջոցների, գյուղատնտեսական մանր գործիքների գնման գները նշված ժամանակահատվածում նվազել են 12.7-1.3%։

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի**

(%)

|                     | 2003 թ վականի              |                         | 2002թ. հունվար-օգոստոսը 2001թ. հունվար-օգոստոսի նկատմամբ |  |
|---------------------|----------------------------|-------------------------|--|--|
|                     | օգոստոսը                   |                         |  |  |
|                     | 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ |  |  |
| <b>ՀՅ, ընդամենը</b> | 103.0                      | 100.6                   | 105.7  |  |
| <i>այդ թվում՝</i>   |                            |                         |  |  |
| Արագածոտն           | 101.5                      | 101.7                   | 105.5  |  |
| Արարատ              | 100.9                      | 101.0                   | 103.2  |  |
| Արմավիր             | 102.3                      | 101.0                   | 105.4  |  |
| Գեղարքունիք         | 98.0                       | 99.8                    | 106.5  |  |
| Լոռի                | 103.6                      | 106.2                   | 106.8  |  |
| Կոտայք              | 105.4                      | 104.4                   | 106.6  |  |
| Շիրակ               | 100.1                      | 96.5                    | 104.4  |  |
| Սյունիք             | 102.6                      | 104.9                   | 105.7  |  |
| Վայոց ձոր           | 107.3                      | 107.7                   | 106.3  |  |
| Տավուշ              | 102.8                      | 100.8                   | 106.1  |  |
|                     |                            |                         | 99.3   |  |